

**ԱՆԳՐԿՈՎԿԱՍԻ ԲՈՂՇԵՎԻԿՆԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ
ՐԻԵՍՏ-ԼԻՏՈՎՍԿՈՒՄ ՏԱՐՎՈՂ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ**

Վ. ՓԵՂՐԻՋՅԱՆ

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո գաղափարական ճակատում պայքարը նոր ուժով ծավալվեց այս անգամ Բրեստ-Լիտովսկում տարվող բանակցությունների և Գերմանիայի ու նրա դաշնակիցների հետ կնքված հաշտության պայմանագրի գնահատման հարցում¹։ Վերստին ի հայտ եկան բոլշևիզմին հակառակ ուղղությունների հակահեղափոխական էությունը և գաղափարական այլասերումը։

Սովետների համառուսաստանյան երկրորդ համագումարը «Բանվորներին, զինվորներին և գյուղացիներին» ուղղված կոչում իր հիմնական խնդիրներից մեկը համարում էր՝ «անհապաղ դեմոկրատական հաշտություն բոլոր ժողովուրդներին և անհապաղ զինադադար բոլոր ռազմաճակատներում»²։ Այդ կոչումին համապատասխան, հոկտեմբերի 26-ին համագումարն ընդունեց Վ. Ի. Լենինի կողմից հռչակված հաշտության մասին դեկրետը, որտեղ ազդարարվում են աշխարհում առաջին սոցիալիստական պետության արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքները։

Այդ պատմական փաստաթղթում պատերազմը համարվում էր մարդկության դեմ ուղղված մեծագույն հանցագործություն և պատերազմող բոլոր պետություններին ու կառավարություններին առաջարկվում էր անմիջապես ստորագրել հաշտության պայմանագրեր՝ «բոլոր ժողովուրդների համար հավասարապես արդարացի մատնանշված պայմաններով»³։

¹ Բրեստ-Լիտովսկում տարվող բանակցությունների և այնտեղ կնքված հաշտության պայմանագրի վերաբերյալ լույս է տեսել սովյար գրականություն։ Այդ հարցերի քննարկումը տե՛ս Сборник документов «Мирные переговоры в Брест-Литовске», т. I, полный текст стенограмм. М., НКВД, 1920. «Документы внешней политики СССР», т. I, М., МИД СССР, 1957; «Советско-германские отношения от переговоров в Брест-Литовске до подписания Рапальского договора», т. I, М., МИД СССР и МИД ГДР, 1968, «История дипломатии», т. III, М., 1955; «Հայաստանի միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923)», Եր., 1972, ինչպես նաև սովետական պատմաբանների հետևյալ աշխատությունները. Ս. Մ. Майоров, Борьба Советской России за выход из империалистической войны М., 1959, Г. Л. Никольников, Выдающаяся победа ленинской стратегии и тактики (Брест-Литовский мир: от заключения до разрыва). М., 1968, А. О. Чубарян, Брестский мир. М., 1964, Մ. Վ. Արզումանյան, Բրեստի հաշտությունը և Հայաստանը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1973, № 1, Լ. Ա. Խորշոդյան, Սովետական Ռուսաստանը և հայկական հարցը, Եր., 1977 և այլն։

Մենք Բրեստ-Լիտովսկում տարվող բանակցությունների, կնքված պայմանագրի հարցերը քննարկել ենք մեզ հետաքրքրող «Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների գաղափարական աշխատանքը 1917—1920 թթ.» պրոբլեմի կապակցությամբ։

² Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 293։

³ Նույն տեղում, էջ 297։

Բանակցությունների նախօրյակին «Բոլոր երկրների աշխատավորներին» ուղղված հատուկ դիմումի մեջ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն պատերազմի ու հաշտության հարցում առաջ էր բաշում բոլորովին նոր սկզբունքներ՝ առաջադրված ռուսական հեղափոխության կողմից: «Մենք համաձայն չենք այնպիսի հաշտության, ասվում էր դիմումի մեջ,— որը սրբագործեր հին անարդարությունները, ստեղծեր նոր շղթաներ և պատերազմի ժանրությունը դնել աշխատավորների ուսերին: Մենք ցանկանում ենք խաղաղություն ժողովուրդներին, խաղաղություն դեմոկրատիային, արդարացի հաշտություն»⁴:

Հաշտության վերաբերյալ առաջարկությանը շերմորեն արձագանքեց ինչպես Ռուսաստանի, այնպես էլ ողջ աշխարհի աշխատավորությունը: Ռուսական հեղափոխության ձայնը հասավ նաև Գերմանիայի ու Ավստրիայի աշխատավորներին, որոնք իրենց համերաշխությունն էին արտահայտում Ռուսաստանի հերոսական բանվոր դասակարգի և գյուղացիության հետ: Գերմանական կառավարության խոստովանությամբ՝ «100.000 բանվորներ գործազույ էին հայտարարել, որպեսզի իրենց անվստահությունը հայտնեն սեփական կառավարությանը»⁵:

«Ամբողջ աշխարհի բանվորները,— գրում էր Վ. Ի. Լենինը,— ողջունում են մեզ, համակրում են մեզ, ծափահարում են մեզ այն քանի համար, որ մենք ամբողջ աշխարհի առաջ բարձրացրինք խաղաղության դրոշը, սոցիալիզմի դրոշը»⁶:

Երկրի միջազգային ծանր դրությունը, տնտեսության փլուզումը, հին բանակի քայքայումը, զինվորների հոգնածությունը, նաև նոր բանակի բացակայությունը, ինչպես նշում էր Վ. Ի. Լենինը, հրամայաբար թելադրում էին հաշտություն կնքելու անհրաժեշտությունը: Ահա թե ինչու բոլշևիկների կուսակցությունը, Վ. Ի. Լենինը, հաշվի առնելով տվյալ իրադրության մեջ ուժերի հարաբերակցությունը և ինչելով ռուսական ու համաշխարհային հեղափոխությունների շահերից, գտնում էին, որ միակ ճիշտ ելքն է ստորագրել, Վ. Ի. Լենինի քննորոշմամբ՝ այդ «ամենածանր, ճնշիչ, գազանային, խայտառակ հաշտությունը»⁷:

Այդ «զոթախտ հաշտությունը»՝ ամբողջությամբ վերաբերում էր նաև Անդրկովկասին, քանի որ Գերմանիան, համաձայն պայմանագրի, պահանջում էր, որ «...ռուսական զորքերը անհապաղ դուրս բերվեն Արդահանի, Կարսի և Բաթումի մարզերից, որ Ռուսաստանը... այդ մարզերի բնակչությանը հնարավորություն կտա դրացի պետությունների, մասնավորապես Քուրդիայի համաձայնությանը հաստատել նոր կարգը»⁸:

Այս կապակցությամբ հրապարակած հատուկ դեկլարացիայում սովետական պատվիրակությունը վճռական բողոք էր հայտնում հիշյալ մարզերը Ռուսաստանից զավթելու դեմ: Այդ փաստաթղթում միաժամանակ շեշտվում էր, որ «հաշվի չնստելով Արդահանի, Կարսի և Բաթումի մարզերի բնակչության իսկական կամքի հետ, Գերմանիան այդ մարզերը բռնի կերպով անջատում է Քուրդիայի օգտին, մարզեր, որոնք ոչ մի անգամ նվաճված չեն եղել թուրքական զորքերի կողմից»⁹:

Երկիրը իմպերիալիստական պատերազմից դուրս բերելու համար մղվող պայքարում կարևոր ուղեկիչ հանդիսացավ կուսակցության VII արտահերթ համագումարը, որը ֆևնարկից նաև պատերազմի և հաշտության հարցը: Համագումարում Կենտկոմի քաղաքական հաշվետվության մեջ Վ. Ի. Լենինը համոզիչ փաստարկումներով հիմնավորեց պայմանագրի կնքման անհրաժեշտությունը և միաժամանակ մերկացրեց նրա հակառակորդների հայացքների անհիմն լինելը: Լենինի զեկուցման մեջ հիմնավորվեց կուսակցության ճիշտ գիծը դադար նվաճելու հարցում, որը նպաստավոր պայմաններ ստեղծեց մեր երկրում սոցիալիստական շինարարության համար:

Վերլուծելով այդ թալանչիական պայմանագրի ստորագրման շարժառիթները, արտաքին գործերի ժողովրդական կոմիտարի տեղակալ Գ. Զիչերինը Սովետների համառուսաստանյան IV արտակարգ համագումարում ընդգծեց, որ «գրանք, ըստ էության բանակցություններ չէին, դա զինված ուժի միջոցով հաշտության պայմանների թելադրում էր մի երկրի, որը պաշտպանվելու հնարավորություն չուներ»¹⁰:

⁴ «Документы внешней политики СССР», т. I, М., стр. 59.

⁵ УИЗУ 2249 Ա ֆ. 130, ց. 1, գ. 87(1), թ. 10—11:

⁶ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 61—62:

⁷ Նույն տեղում, հ. 27, էջ 57:

⁸ Նույն տեղում, հ. 27, էջ 41:

⁹ «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», Եր., 1972, էջ 426:

¹⁰ «Документы внешней политики СССР», т. I, М., стр. 118.

¹¹ Նույն տեղում, էջ 666:

Ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Անգրկովկասում բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունները պատերազմի ու հաշտության հարցում անհաշտ դիրք բռնեցին բուլղեիկների հանդեպ և միասնական ճակատով հանդես եկան սովետական իշխանության խաղաղասիրական քաղաքականության դեմ: Հաշտության պայմանագրի կնքումը կատաղություն առաջ բերեց բուլղեիկմիջնամի լագերում:

«Այդ հաշտությամբ առաջ եկած դառնությունը, զայրույթը, կատաղի վրդովմունքը հասկանալի են,— նշում էր Վ. Ի. Անիկը,— և ինքնըստինքյան պարզ է, որ մենք՝ մարքսիստներս կարող ենք միայն պրոլետարիատի գիտակից ավանգարդից սպասել այն ճշմարտության ըմբռնումը, թե մենք մեծագույն ազգային զոհաբերություններ ենք անում և պետք է անենք համաշխարհային պրոլետարական հեղափոխության բարձրագույն շահի համար»¹²:

Անգրկովկասում, որտեղ ժամանակավոր տեր ու տնօրինություն էր անում մենշևիկների, դաշնակների և մուսաֆաթականների հակահեղափոխական բռնկը (բացառությամբ Բաքվի և նրա շրջանի), Բրեստում տարվող բանակցությունների և ստորագրված պայմանագրի նկատմամբ իր անհաշտ վերաբերմունքով մի ավելորդ անգամ բացահայտեց իր հակահեղափոխական էությունը: Երկրամասի «կառավարությունը»՝ Անգրկովկասյան սեյմը, հրաժարվելով մասնակցել Բրեստ-Լիտովսկում տարվող բանակցություններին, զբաղված էր բողոքի նոտաներ հղելով աշխարհի շատ պետությունների կառավարություններին, նշելով, որ «սամանային հարցի քննարկումը առանց իր մասնակցության համարվում է զուրկ միջազգային արժեքից և ինքը պատրաստվում է մեկնել Տրապիզոն Թուրքիայի հետ վերջնական հաշտության պայմանագրի կնքելու համար»¹³:

Սեյմի նիստերում նրա անդամները հանդես էին գալիս մեծազորող հայտարարություններով, խոստումներ շոսյում աշխատավորությանը, թե իրենք կկենք միայն պատվավոր և արդարացի հաշտություն, կյանքի գնով կպաշտպանեն յուրաքանչյուր թիզ հողը, կպահպանեն երկրամասի ամբողջականությունը և այլն և այլն:

Վրաց մենշևիկմի պարագլուխ «սոցիալիստ» Ժորդանիան սնապարծորեն հայտարարում էր. «Այնպիսի հաշտություն, որպիսին ստորագրեցին բուլղեիկները, մենք չենք ստորագրի, ավելի լավ է պատվով մեռնել դիրքերում, քան թե խայտառակվել և սերունդների անեծքին մատնվել»¹⁴:

Դաշնակ սեյմական Հարությունյանը, կտրվելով ոեալ իրականությունից, իր կուսակցությանը սազական ոճով հոխորտում էր. «Մենք հավատում ենք, որ ժողովրդի միակ փրկությունը զենքի մեջ է»¹⁵:

Երկրամասի հակահեղափոխական, ազգայնական կուսակցությունները, շխորչելով ոչնչից և օգտագործելով բնակչության մանրբուրժուական, քաղցրեհիսկական խավերի տրամադրությունները, ուժեղացրին հակաբուլղեիկյան կամպանիան: Բուլղեիկմի գաղափարական թշնամիները վայնասուն բարձրացրին, իրենց իսկ մեղքով Անգրկովկասի վրա թափվող բոլոր ձախորդությունների պատճառը որոնելով Բրեստում կնքված պայմանագրի մեջ:

Հակահեղափոխական թերթերի էջերը ծանրաբեռնված էին կոպիտ հարձակումներով, անհիմն մեղադրանքներով բուլղեիկների և սովետական իշխանության խաղաղասիրական քաղաքականության դեմ: Ահա խորագրերը մի քանի հոդվածների, որոնք տպագրվել են այդ օրերին հակահեղափոխական մամուլում. «Ամոթաբեր հաշտություն», «Մի ոճիր ևս», «Օրհասական դրություն», «Խայտառակ դաշնագիր», «Զարագուշակ հաշտություն»¹⁶ և այլն, և այլն:

Իր զայրույթը արտահայտելով Կարսը, Արդահանը, Բաթումը թուրքերին հանձնելու «բուլղեիկյան որոշման» դեմ, դաշնակցական «Զինվոր» թերթը հետևություն է անում. «Այդպես են իրագործում բուլղեիկները Հայաստանի անկախության մասին իրենց հրատարակած մեծազորող դեկրետը»¹⁷:

«Այդ պարտավորություններով,— (Բրեստի պայմանագրի—Վ. Փ.) հետևություն է անում բուլղեիկմիջնամի մեկ այլ օրագու՝ «Բաթու» թերթը,— Ռուսաստանը ընդգրկվում է գերմանո-ավստ-

¹² Վ. Ի. Անիկ, Երկեր, հ. 28, էջ 228:

¹³ Ս. Վրացյան, Հայաստանի հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 80:

¹⁴ Н. Жордания, За два года, Тифлис, 1919, с. 65, տե՛ս նաև «Հորիզոն», № 35, 17 փետրվարի 1918:

¹⁵ Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 98:

¹⁶ «Զանգ», № 15, 23 փետրվարի 1918, «Հորիզոն», № 37, 20 փետրվարի 1918, «Մշակ», № 38, 21 փետրվարի 1918, «Հայաստանի ձայն», № 153, 10 հոկտեմբերի 1920, «Լրաբեր», № 1, 20 մայիսի 1918:

¹⁷ «Զինվոր», № 9, 27 փետրվարի 1918:

րիական—թուրքական դաշինքի մեջ՝ պաշտպանելու համար Թուրքիայի շահերը նրա անատոլիական արևելյան սահմանում»¹⁸։

Սովետական իշխանության, բոլշևիկների կուսակցության դեմ շարամիտ հարձակումներ էր գործում Բաքվում հրատարակվող դաշնակցության ձայնափող «Արև» թերթը։ Կոմկասցիները շատ լավ գիտեն,— գրում է «Արևը»,— թե ով է ծախել ոչ միայն կոմկասը, այլև ամբողջ Ռուսաստանի կեսը համաձայն Բրեստի պայմանագրի»¹⁹։

Պատերազմի ու հաշտության հարցում սոցիալիզմի և պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշմ բարձր պահեցին միայն բոլշևիկները, որոնք մանրրոլծուական, քաղքենիական հայրենասիրությանը հակադրեցին հեղափոխական, մարքսիստական-լենինյան մոտեցումը։ «Մենք,— նշում էր Վ. Ի. Լենինը,— ամեն ինչ արինք Ռուսաստանի աշխատավոր մասսաների համար, և մենք ավելի շատ բան ենք արել, քան որևէ մեկը, համաշխարհային պրոլետարական հեղափոխության համար»²⁰։

Այդ պայմաններում ՌՍԳԿ(բ) կոմկասի Երկրային կոմիտեի, Անդրկոմկասի բոլշևիկյան կազմակերպությունների, գաղափարական ճակատի աշխատողների առջև կարևորագույն խնդիր ծառայեց՝ ամենօրյա հետևողական բացատրական աշխատանքով, օգտագործելով պրոպագանդայի ու ագիտացիայի բոլոր միջոցները, հեռու պահել աշխատավորությանը գաղափարական այլաճանաչումից, մերկացնել մենշևիկյան-դաշնակցական հակահեղափոխական բլուրը, պարզաբանել, բոլշևիկյան կուսակցության և սովետական իշխանության արտաքին քաղաքականության էությունն ու նշանակությունը։

1918 թ. ապրիլի 18-ին ՌՍԳԿ(բ) կոմկասի Երկրային կոմիտեն, հավատարիմ լենինյան դիրքորոշմանը, ընթացիկ մոմենտի մասին ընդունած բանաձևում Բրեստի հաշտության վերաբերյալ նշում է. «Երեքի ստեղծված դրոժիան պայմաններում, երկրի ընդհանուր հյուսվածությունը, ուժեղացող քայքայման և մարտական ուժերի բացակայության իրարդրության մեջ այդ պայմանագրեր Ռուսաստանի կողմից միակ հնարավոր փորձն է, թեկուզ և մասամբ, դուրս պրծնելու իմպերիալիստական պատերազմից»²¹։ «Ժթախտ, բռնի հաշտությունը,— այնուհետև ասվում էր բանաձևում,— Համառուսաստանյան Սովետական իշխանությունը ստորագրեց, որպեսզի օգտվելով հնարավոր դադարից, ամբողջ եռանդով սկսի նոր տնտեսակարգի կարգավորումը՝ սոցիալիստական արտադրության հիման վրա, մի արտադրություն, որը իրենից կենդանացնի աշխատանքի ու ընդհանուր հավասարության նոր աշխարհը»²²։

Բոլշևիկների կուսակցության և սովետական իշխանության խաղաղասիրական քաղաքականության պրոպագանդայով և հակահեղափոխական կուսակցությունների դավաճանության մերկացմամբ գաղափարական խոշոր աշխատանք են տարել հեղափոխության կոմկասյան միջնաբերդի՝ սովետական Բաքվի բոլշևիկները։ Նրանք պատերազմի ու խաղաղության հարցում ևս իրովին պաշտպանում էին սովետական իշխանության քաղաքականությունը։

Լենինի հավատարիմ գիտակիցներ Սու. Շահումյանը, Ա. Զափարիձեն, Մ. Աղիզբեկովը, Ա. Միկոյանը, Գ. Ստորոտան, Գ. Կորգանովը, Ն. Նարիմանովը և շատ ուրիշներ, երկրամասի աշխատավորությանը պարզաբանելով կուսակցության քաղաքականությունը, միաժամանակ մերկացնում էին Անդրկոմկասը և աշխատավորության շահերը օտարերկրյա իմպերիալիստների վաճառած մենշևիկյան-դաշնակցական-մուսաֆաթական հակահեղափոխական բլուրի դավաճանությունը, գերմանա-թուրքական գիշատիչ իմպերիալիզմի նվաճողական քաղաքականությունը։

1918 թ. փետրվարի 16 (մարտի 1)-ին Բաքվի Սովետի նիստում անարգանքի սյունին գամելով բոլոր նրանց, ովքեր դեմ էին Բրեստի բանակցություններին, Զափարիձեն իր ելույթում ասաց. «Հեղափոխության բոլոր նվիճումները այնքանով իմաստ ունեն, որքանով նրանք մեզ մոտեցնում են սոցիալիզմին»²³։ Պաշտպանելով սովետական իշխանության խաղաղասիրական շանքերը, Զափարիձեն նշեց, որ այդ բանակցություններում Սովետական Ռուսաստանը գերմանական իմպերիալիզմին և ամբողջ աշխարհին ցույց տվեց, որ բոլշևիկները պատերազմ չեն ուզում, արյունահեղություն չեն ուզում, որ այդ հաշտությունը համաշխարհային մեծագույն քաղաքագետ

¹⁸ «Բաքու», № 35, 14 փետրվարի 1918:

¹⁹ «Արև», № 143, 24 հուլիսի 1918:

²⁰ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 184—37—156:

²¹ «Հեղափոխության Սոցիալիստական Մեծ Հեղափոխությունը և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 1960, էջ 212:

²² Նույն տեղում, էջ 212—213:

²³ Պ. Ա. Զափարիձեն, Ընտրի հոգվածներ, ճառեր և նամակներ, 1905—1918 թթ., Եր., 1970, էջ 279:

ընկեր լենինի ակտն է»²⁴։ «Պետք էր ներկա լինել սովետի այն նիստին,— գրում է Միկոյանը,— և տեսնել ու լսել, թե այնտեղ Զափարիձեն ինչպիսի փայլով ու կրքոտությամբ, ինչպիսի ծանրակշիռ փաստարկներով պաշտպանեց լենինյան խաղաղասիրական քաղաքականությունը Զափարիձենի հյուսիսը հակալական տպավորություն գործեց Սովետի բոլոր ղեկավարների վրա, և շատերը, նույնիսկ տասանվողները, պաշտպանեցին բոլշևիկյան ֆրակցիայի բանաձևը, որն այն ժամանակ ստացավ ձայների զգալի մեծամասնություն»²⁵։ Իրոք այդ նիստում ընդունած բանաձևում Բաքվի Սովետը իր համերաշխությունը արտահայտելով ժողովրդական կոմիսարների խորհրդի հետևողական քաղաքականությանը, «իր պատրաստակամությունն է հայտնում, ցույց տալու նրան ամեն տեսակի աջակցություն»²⁶։

«Բակինսկի ուսրոշի» թերթը հաղորդում էր 1918 թ. մարտի 6-ի համաքաղաքային կոնֆերանսի աշխատանքների մասին, որտեղ բոլշևիկների կուսակցության խաղաղասիրական քաղաքականության պաշտպանությամբ հանդես են եկել Ստ. Շահումյանը, Մ. Ազիզբեկովը, Ա. Միկոյանը և ուրիշներ։

«Այն հաշտության պայմանագրերը, որը համաձայնել են ստորագրել Պիտերի մեր ընկերները,— իր հյուսիսում նշեց Շահումյանը,— պարզապես որոշակի տակտիկական քայլ է ժողովուրդի կողմից և ամենինն էլ հակված չէ այն ընդունելու որպես իսկական հաշտություն, որին ձգտում է ռուսական հեղափոխությունը»²⁷։ Վերջում Ստ. Շահումյանը հույս է հայտնում, որ պրոլետարական համաշխարհային հեղափոխությունը «մոտ ապագայում... փաստ կդառնա, և միայն այդ ժամանակ հնարավոր կլինի իսկական հաշտությունը»²⁸։

Բաքվի Սովետի 1918 թ. հունիսի 7-ի նիստում հաշտության պայմանագրի կնքման կապակցությամբ ժխտելով քաղաքի մենշևիկների պարագլուխ Այլոլոյի անհիմն հարձակումները, Ազիզբեկովն ասաց. «Բոլշևիկները ստիպված էին դրան դիմել հանգամանքների բերումով, և եթե ներքան, հետևելով մենշևիկների տակտիկային, շարունակեին պատերազմը, մենք կկորցնեինք մեր հայրենիքի լավագույն զավակներին և դրանով հանդերձ չէինք փրկի Ռուսաստանը»²⁹։

Հավաստի փաստերով Ազիզբեկովը ցույց տվեց, որ հակահեղափոխությունը այժմ նոր զավեր է նյութում երկրամասի աշխատավորության և հեղափոխության հանդեպ «Մենշևիկները ժուռաֆաթի հետ միասին որոշել են,— ասաց իր հյուսիսի վերջում Ազիզբեկովը,— որ ավելի լավ կլինի թուրքիան տիրի Անդրկովկասին, միայն թե ընդհանուր ոչինչ չունենան բոլշևիկների հետ»³⁰։

Սովետական իշխանության խաղաղասիրական քաղաքականության պրոպագանդան և հակահեղափոխական ուժերի զավաճանության մերկացման գործում կարևոր դեր է կատարել երկրամասի բոլշևիկյան պարբերական մամուլը։

Այսպես, Երևանում հրատարակվող բոլշևիկյան «Խոսք» թերթը պատերազմի ու խաղաղության հարցում պաշտպանելով լենինյան տեսակետը, գրում է. «Թրեստի հաշտությունը իրոք զեժրախտություն է Ռուսաստանի համար, բայց չպետք է հուսահատվել, քանի որ այս հաշտությունը գինեղաղար է միայն»³¹։ Թերթը հույս է ներշնչում հայ աշխատավորությանը, որ «Ռուսաստանը նորից ուրի կկանգնի և զենքով կպաշտպանի իր ոտնահարված իրավունքները և սոցիալիզմի իդեալները»³²։

Ժխտելով «Բաքու» թերթի անհիմն մեղադրանքները, որը Թրեստի հաշտությունը համարում էր «պատմության ամենամոթալի էջը»³³, «Բակինսկի ուսրոշի»-ն գրում է. «...նրանց ամոթալի չէր թվում այն, երբ կերենսկին ու Տերշշենկոն անգլո-ֆրանսիական իմպերիալիստների պահանջով սպանողի էին թշում ռուս զինվորներին, տալով հազարավոր ու տասնյակ հազարավոր անընդ-պատակ զոհեր»³⁴։

²⁴ Նույն տեղում։

²⁵ Ա. Ի. Միկոյան, Պայքարի ուղիով, գիրք առաջին, Եր., 1972, էջ 177—178։

²⁶ «Большевики в борьбе за победу социалистической революции в Азербайджане». документы и материалы, 1917—1918 гг., Баку, 1957, с. 300.

²⁷ Ստ. Շահումյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, Եր., 1978, էջ 157։

²⁸ Նույն տեղում։

²⁹ «Мешеди Азизбеков пламенный борец за власть Советов», речи, документы и материалы, Баку, 1976, с. 81.

³⁰ Նույն տեղում։

³¹ «Խոսք», № 3, 12 հոկտեմբերի 1918։

³² Նույն տեղում։

³³ «Բաքու», № 26, 3 փետրվարի 1918։

³⁴ «Բակինսկի ուսրոշի», № 27, 17 (4) փետրվարի 1918։

Պատերազմի և խաղաղության հարցում բոլշևիկների կուսակցության, սովետական իշխանության քաղաքականության պաշտպանությամբ, ինչպես նաև բուրժուական, ազգայնական կուսակցությունների հակահեղափոխական հայացքների մերկացմամբ բոլշևիկյան պարբերական մամուլում հանդես են եկել կուսակցության ականավոր ներկայացուցիչներ Ա. Միկոյանը, Շ. Հովսեփյանը և ուրիշներ³⁵:

Գաղափարական այլ սուր և բարդ պայքարում նոր ուժով փայլեց Կովկասի բոլշևիկների ճանաչված առաջնորդ Ստ. Եահումյանի՝ անձնվեր լենինյանի, անկուտ հեղափոխականի կերպարը, տեսական, տակտիկական հարցերում լենինյան դիրքորոշման խորը ըմբռնմամբ և մարքսիստական վերլուծության կարողությամբ:

Բարձի սովետի նիստում, պատասխանելով Բարձի դաշնակցության պարագլուխներից մեկի՝ Զարիֆյանի այն հայտարարությանը, որ իբր բոլշևիկները խայտառակ հաշտություն են ստորագրել, Եահումյանը իր ելույթում, համեմատության մեջ դնելով բոլշևիկների կուսակցության տակտիկան երկրամասի հակահեղափոխական լուկի և հատկապես դաշնակցության ծախու քաղաքականության հետ, ասաց. «Մի բան է օրյակտիվ անխուսափելիությունը. անելանելի կացությունը, երբ զիջման ես գնում, ընդունում ես հաշտության ծանր պայմանները, և ուրիշ բան է, երբ օրյակտիվ դրությունը հնարավորություն է ստեղծում հեղափոխական տակտիկայի հաղթանակի համար, կուսակցությունը վարում է մի քաղաքականություն, որը կործանում է հեղափոխությունը»³⁶:

Ստ. Եահումյանը միաժամանակ մատնանշում էր այն փաստը, որ բոլշևիկների տակտիկային հավանություն է տվել Ռուսաստանի ողջ աշխատավորությունը, որը գնում է սովետական կառավարության հետևից. «Իսկ ձերոք»՝ Փաշազունիների, Զինակելիների և մուսաֆաթականների հետևից... որոնք պրոլետարիատի մեջ ոչ միայն չունեն հենարան ու աջակցություն, այլև Անդրկովկասի ամբողջ բանվորության ու գյուղացիության առաջ նրանք հայտարարված են ժողովրդի թըշնամիներ»³⁷:

Բարձի սովետի մեկ այլ նիստում անդրադառնալով Բրեստի պայմանագրին և այս հարցում մենշևիկների ու դաշնակների կողմից թույլ տրվող ոճալ փաստերի շինծու աղավաղումներին, Եահումյանը նշում էր. «Կարելի է, իհարկե, ֆրազները մեկը մյուսի հետևից շարել, բայց որպեսզի դրանք կարողանան մասսաների վրա ազդել՝ դրանց հետևում ճշմարտություն պետք է թարնված լինի»³⁸:

Դիմելով փաստերին. Եահումյանը ասաց, որ սովետական իշխանությունը ռազմական ուժի ճնշման տակ ստիպված էր կնքել այդ շարքաաստիկ պայմանագիրը, բայց միաժամանակ այն կարող էր շտարածվել Անդրկովկասի վրա, քանի որ «փոխհարաբերությունները պետությունների միջև որոշվում են ոչ թե թղթի կտորներով, այլ ուժերի ոճալ հարաբերակցությամբ»³⁹: Դիմելով աջակողմյան ներկայացուցիչներին՝ Եահումյանը շարունակում է. «Թե՛ն էր խանգարում Անդրկովկասին շիրաքործել այդ պայմանագիրը և պաշտպանել իրեն նրանից... երբ մեր դեմ էին շարժվում ոչ թե գերմանական ուժեղ զորքերը, այլ հոգնած ու կազմալուծված թուրքերը: Մենք կարծում էինք,— վերջում ասաց Եահումյանը,— Անդրկովկասը կարող է իրեն պաշտպանել և շտալ այն, ինչ որ դիջված է Բրեստի պայմանագրով»⁴⁰:

Արտահայտելով սովետական կառավարության տեսակետը այս հարցում, Եահումյանը շարունակում է. «Երբ մենք հարց դրինք, թե ինչպես կվերաբերվի դրան Կենտրոնական կառավարությունը, ...մեզ համար պարզ էր, որ կառավարությունը կարող է միայն ողջունել կովկասյան հերոսներին»⁴¹:

«Հանուն ազգային բարօրության Կովկասի բնակչությունը ի վիճակի կլինի արիությամբ պաշտպանելու իր շահերը և ուրիշներին ցույց տալու Կովկասի նկատմամբ ունեցած սիրո և անձնըվերության օրինակ»—գրում էր «Պրավդան»⁴²:

Ի պատասխան մենշևիկների ու դաշնակների կեղծիրքներին և դեմագոգիկ հայտարարություններին, որոնք Անդրկովկասում տիրող անօրինականությունների, ստեղծված անարխայի պատճառ էին համարում Բրեստի պայմանագիրը, իր ելույթում Եահումյանը հիշեցնում է սեյմում

35 Տե՛ս «Известия Бакинского Совета», № 102, 31 (18) мая 1918, «Կոմունիստ», Մ., № 4, 11 օգոստոսի 1918:

36 Ստ. Եահումյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Եր., 1978, էջ 29:

37 Նույն տեղում:

38 Նույն տեղում, էջ 83:

39 Նույն տեղում:

40 Ստ. Եահումյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Եր., 1978, էջ 34:

41 Նույն տեղում:

42 «Պրավդա», № 53, 23 (10) մարտի 1918:

Օնիաշվիլու պրովոկացիոն հայտարարությունն այն մասին, թե «ռուսական օրիննացիան ուսկ-ցիոն է» և «պետք է ուրիշ օրիննացիա փնտրել»⁴³: Մեկ այլ «սոցիալիստ»՝ Ջիսիսինն ավելի առաջ գնաց, հայտարարելով, թե «լավ է ընկնել Թուրքիայի, քան բուլղարիկների գիրկը»: «Երբ մարդը նման արտահայտություններ է իրեն թույլ տալիս,—նշում էր Ստ. Շահումյանը,— ապա այստեղ ի՞նչ գործ ունի Բրեստի պայմանագիրը»⁴⁴:

ԽՄԴԲԿ(բ)-ի Երկրային կոմիտեի, գաղափարական ճակատի աշխատողների ամենօրյա հետեւողական գործունեությունը Անդրկովկասի բանվորների և գյուղացիների շրջանում հանգեցրեց ներքան, որ գնալով ավելի ու ավելի մեծ թվով աշխատավորներ հեռանում էին մենշևիկյան-դաշնակցական գաղափարական ազդեցությունից և համոզվում բուլղարիկների կուսակցության ու սովետական իշխանության ճշմարտացի քաղաքականության մեջ՝ նաև պատերազմի ու խաղաղության հարցում:

Այսպես, 1918 թ. մայիսի 29-ին Բաքվի բանվորների, զինվորների և նավատիների ղեկուսատներին սովետի և Բաքվի շրջանի մուսուլման գյուղացիների համագումարի ղեկուսատների միացյալ նիստի ընդունած բանաձևում ասվում է. «Մեր բախտը սերտորեն կապած լինելով հեղափոխական Ռուսաստանի հետ, մենք կարող ենք ճանաչել միայն այն հաշտությունը, որը կրնա թել է Ռուսաստանի Կենտրոնական Սովետական բանվորագյուղացիական կառավարությունը»⁴⁵:

1918 թ. մարտի 15-ին Սովետների համառուսաստանյան շորրորդ արտակարգ համագումարը հաստատեց Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը:

Խոսելով Բրեստի պայմանագրի կնքման անհրաժեշտության և ձեռք բերված արդյունքների մասին, Վ. Ի. Լենինը նշում է. «Եթե մենք Բրեստի հաշտությունը չկնքեինք, մենք իշխանությունը միանգամից կտայինք ռուսական բուրժուազիային և դրանով մեծագույն կերպով կվնասեինք համաշխարհային սոցիալիստական հեղափոխությանը: Երկրորդ՝ ազգային զոհաբերությունների գնով մենք պահպանեցինք հեղափոխական այնպիսի ինտերնացիոնալ ազդեցություն, որ այժմ ուղղակի մեզ ընդօրինակում է Բուլղարիան, ետում են Ավստրիան ու Գերմանիան, թուլացել են երկու իմպերիալիզմն էլ, իսկ մենք ամրապնդվել ենք»⁴⁶:

Զհաշտվելով հաշտության ծանր պայմանների հետ և միաժամանակ արտահայտելով կուսակցության և պրոլետարիատի գիտակից մասի կամքը, «Պրավդան» այդ օրերին գրում էր. «Զարմանալի ուղին չկա դրանում, որ ընայած Բրեստի հաշտության պայմանագրի վավերացմանը, լուրաքանչլուր գիտակից բանվոր ու գյուղացի կզգա, որ այդ հաշտությունը, ինչպես վարակիչ փուշ ժողովրդի մարմնի մեջ, պետք է դուրս հանել ինչ գնով ուզում է լինի»⁴⁷:

1918 թ. նոյեմբերի 13-ին, Գերմանիայում հեղափոխություն բռնկվելու կապակցությամբ, Համառուսաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն հատուկ որոշումով Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը շեղյալ հայտարարեց: «Բրեստ-Լիտովսկի բռնության և թալանի պայմանագիրն ընկավ գերմանական և ռուսական հեղափոխական պրոլետարների միացյալ հարվածներից»—նշվում էր որոշման մեջ⁴⁸: «...Ռուսաստանի, Լեհաստանի... Ուկրաինայի... Ղրիմի և Կովկասի աշխատավոր մասսաները,— ասվում էր որոշման վերջում,— ազատագրվելով... թալանչիական պայմանագրի ճնշումից, ...այժմ իրենք պետք է վճռեն իրենց բախտը»⁴⁹: Թուրքիայի հետ հաշտության պայմանագիրը սովետական կառավարությունը շեղյալ էր հայտարարել դեռևս 1918 թ. սեպտեմբերի 20-ին⁵⁰:

В. К. ПЕЯРИЗЯН—Идеологическая работа большевиков Закавказья в период переговоров и заключения мирного договора в Брест-Литовске.—В статье на основании архивных источников и материалов периодической печати освещается идеологическая работа большевиков Закавказья, которые вели борьбу против мелкобуржуазных и националистических партий края, поддерживали мирную внешнюю политику Советской России.

⁴³ Ստ. Շահումյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Եր., 1978, էջ 85:

⁴⁴ Նույն տեղում:

⁴⁵ Նույն տեղում, էջ 89:

⁴⁶ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 126:

⁴⁷ «Պրավդա», № 53, 23 (10) մարտի 1918:

⁴⁸ «Документы внешней политики СССР», т. I, М., стр. 565.

⁴⁹ Նույն տեղում:

⁵⁰ Նույն տեղում, էջ 490—492: